ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ԴԱՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄ
ԴԱՏԱԿԱՆ ԴԵՊԱՐՏԱՄԵՆՏԻ ՂԵԿԱՎԱՐ

0009 ք.Երևան, Կորյուն 15/1, Հեռ: (00 37410) 511-771

N ԴԴ -1 - Ե - 1942

«09» մարտի 2023թ.

«ԼԵՎԵԼ-ԷՍ» ՍՊԸ-Ի
ՏՆՕՐԵՆ Ս. ՊԵՏՐՈՍՅԱՆԻՆ

Հարգելի՛ պարոն Պետրոսյան,

Դատական դեպարտամենտի կարիքների համար հեռախոսային կայանների, գրասեղանների և ուղղահայաց շերտավարագույրների ձեռքբերման (այսուհետ՝ Ապրանք) նպատակով հայտարարված «ԴԴ-ԷԱՃԱՊՁԲ-22/19» ծածկագրով գնման ընթացակարգի արդյունքում 16.05.2022թ. կնքվել է N «ԴԴ-ԷԱՃԱՊՁԲ-22/19-3» ծածկագրով պայմանագիրը (այսուհետ՝ Պայմանագիր), որի գինը կազմում է 17 600 000 (տասնյոթ միլիոն վեց հարյուր հազար) ՀՀ դրամ:

Պայմանագրով նախատեսված Ապրանքի մատակարարման նպատակով նախատեսվել են ֆինանսական միջոցներ՝ 10 509 523.20 (տաս միլիոն հինգ հարյուր ինը հազար հինգ հարյուր քսաներեք դրամ քսան լումա) ՀՀ դրամի չափով և առկա ֆինանսական միջոցների շրջանակներում համաձայնագիր կնքելու նպատակով Դատական դեպարտամենտի կողմից 14.02.2023թ. թիվ ԴԴ-3-Ե-1081 գրությամբ ուղարկվել է համաձայնագիր կնքելու առաջարկ՝ կից համաձայնագրի նախագծով: Դատական դեպարտամենտի կողմից ծանուցումն ուղարկվելուն հաջորդող օրվանից հաշված Պայմանագրի 8.15 կետով սահմանված ժամկետում Ձեր կողմից Դատական դեպարտամենտ չի ներկայացվել Ձեր կողմից հաստատված համաձայանագիրը:

Հիմք ընդունելով վերոգրյալը, ինչպես նաև այն հանգամանքը, որ Ձեր կողմից խախտվել են Պայմանագրի 8.15 կետով սահմանված պարտավորությունները, և ղեկավարվելով Պայմանագրի 8.15 կետի պահանջներով, տեղեկացվում է, որ Դատական դեպարտամենտը՝

1. միակողմանիորեն լուծում է Պայմանագիրը,
2. ձեռնարկում է Պայմանագրով և ՀՀ օրենսդրությամբ սահմանված պահանջներից բխող միջոցներ:

Հարգանքով՝

ՆԱԻՐԻ ԳԱԼՍՏՅԱՆ